

է ուսումնասիրում, 6 շաբաթ է սովորում, բայց երբ լրանում է տասնէֆնգերորդ տարին և նա երկու միլիոնը պէտք է ստանար, մի քանի ժամ առաջ գրում է, ը... Ես արհամարհում եմ ձեր գրքերը, արհամարհում եմ ողջ աշխարհի բոլոր բարեքներն ու իմաստութիւնը։ Ամեն ինչ դատարկ է, եղծանելի ու ապականացու, ցնորական ու խարուսիկ, ինչպէս շամանգաղ, Անաս չկայ, որ դուք հպարտ էք, իմաստուն և գեղեցիկ, բայց մահը ձեզ էլ կսրբէ կտանէ աշխարհիս երեսից, ինչպէս յատակի տակ ծածկուած մկներին, իսկ ձեր սերունդը, պատմութիւնը, ձեր հանձարների անմահութիւնը կառուցին կամ կայրուին երկրագնդի հետ...»

Այսպիսի եղբակացութեան գալով կեանքի և ապրելու մասին, տասնէֆնգ տարի բանտարկուածը, հարկաւ միլիոնների կարիքը էէր դգայ այլ ևս. և որպէսզի երկու միլիոնը ստանալու իրաւունքից զրկուի, պայմանաժամից 5 ժամ առաջ փախչում է բանտից, Թէ նիւթի հետաքրքրութեան և թէ հայագրած ու յարող թարգմանութեան շնորհիւ՝ «Գրապը» հաճոյքով է կարգացուում։

4. ԵՆԳԻՆՆԷ ՏՈՒՐ. Մարգարտէ մանեակ. Թարգ օր.՝ Նուարդ, Թիֆլիզ, 1903. 47 էջ. դ. 10 կողմ.

Չգձգուած և հեքիաթային պատմութիւն է. «Որքան մարդ աւելի հարուստ լինի, այնքան աւելի պարտական է բարեգործութիւն անել. մեր ունեցած հարստութիւնը Աստու շնորհած մի պարգևն է, որ նա յանձնել է մարդուն՝ իր մերձաւորներին, կարիք ունեցողներին օգնելու համար, իսկ ուսումն ու գիտութիւնն էլ նոյն հարստութիւններն են. հետևապէս նրանց ևս պէտք է բաժանել բոլորի մէջ, գործ անել մարդկանց և մերձաւորների օգտի համար, որովհետև բոլոր մարդիկ մեր եղբայրներն են և մի Աստու որդիք» (էջ 44)։ Ահա այս հասարակ բարոյականը դուրս բերելու համար, հեղինակն ինչ տես, որ չէ նկարագրում։ Հարուստ հրէայ ընտանիք, գեղահարաշաղիկ, որ երկար ժամանակ—ամիսներ, գուցէ և տարիներ մնում է մեռած դրութեամբ—միայն թոյլ շնչում է.—հրէան պարագում է գիտութիւններով, ոչ ոքի հետ յարաբերութիւն չունի, գիւտեր է անում, իրեն Աստուած երևակայում, բայց աղջկան չէ կարողանում բժշկել. յետոյ երազ է տեսնում, որ իւր



շինած մարգարտէ մանեակով միայն աղջիկը կլաւանայ, երկար, երկար աշխատում է մարգարիտ շինելու զիւան անել, գնում է ծովեզր, ՍաՀարա, բայց չի կարողանում. ՍաՀարայում մեռնող մօր զաւակը վերցնելով և խնամելով ճերմատաղիտութեան արցունք՝ մարգարիտ է ստանում և դրանով բժշկում աղջկան... Թարգմանում է խնամքով և կանոնաւոր հայերէնով:

Ե. Ա. ՁԻԼԻՆԳԱՐԵԱՆ. Մանուկների ստախօսութիւնը եւ նրա առաջն առնելու միջոցները. Ալէքսանդրապոլ. 1903

57 էջ գ. 15 կտպ.

Վերջին ժամանակներս մեր հասարակութիւնը բոլորովին չէր հետաքրքրուում մանկավարժական-դաստիարակչական խնդիրներով և հայ դրականութեան մէջ էլ հազուադիւրս բան էր դարձել այդ բովանդակութեամբ գրքերի ու գրքոյկների երևալը. հրատարակածներն էլ անուշադիր էին մնում. Լուծւայում մենք արդէն խօսել ենք այդ ընթացքի սխալ լինելու մասին. սերնդի դաստիարակութեան խնդիրը երբէք չլէտք է մոռացութեան արուի, որովհետև ինչպէս ժողովրդական առածն առ սում է. «Ինչ կցանես, այն կհնձես», Ինչ ուղղութեամբ էլ որ նոր սերունդը կրթուի, ապագայում հասարակական խնդիրներն էլ նոյն ուղղութեամբ կարծարժուեն. բարոյական սկզբունքներով կրթուած սերունդը՝ ապագայում բարոյական սկզբունքներով էլ կգործէ և ընդհակառակը՝ թոյլ, մեղկ և առանց բարոյական սկզբունքների դաստիարակուած սերնդի ապագայ գործունէութիւնն էլ անորոշ, տատանուող և անիմաստ կլինի:

Մեր հին և նոր սերունդների և առհասարակ ասիական ժողովուրդների բարոյական թերութիւններից մէկն է ստախօսութիւնը, որ շատ անգամ անմտութեան և առասպելական չափերի է հասնում. սուտ խօսելը մի այնպիսի սովորական բան է շատ շատերի համար, որ առանց որևէ խղճի խայթ զգալու և անհանգստանալու՝ զիտակցաբար ասում են այն, ինչ որ ձշմարիտ չէ՝ երբեմն նպատակով, երբեմն էլ առանց նպատակի, յիմարաբար:

ՍՀձ այս բարոյական թերութեան մասին է խօսում պ. Զիլինգարեանն և յատկապէս մանուկների ստախօսութեան մասին:

«Մանուկների ստախօսութիւնը զուտ մանկավարժական,